# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 4

**<<ԳՀԱՊՁԲ-2020/16-13-ԵՊԲՀ >> ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման և գնահատման նիստի**

**ք. Երևան** **_09_ _հուլիսի_ _2020թ._**
**ժամը _09$^{30}$_**

**Մասնակցությամբ՝**
Հանձնաժողովի նախագահ՝ **Լ.Դանիելյան**
Հանձնաժողովի անդամներ՝ **Ա.Պետրոսյան, Ա.Հակոբյան, Է.Միրոյան**
Հանձնաժողովի քարտուղար՝ **Մ.Ղարիբյան**
**Բացակայությամբ՝ Հ.Սարգսյան**

**1. << ԳՀԱՊՁԲ-2020/16-13-ԵՊԲՀ >> ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում ներկայացված բողոքի վերաբերյալ**

1.1 «ԳՀԱՊՁԲ-2020/16-13-ԵՊԲՀ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հայտերը բացվել են ս.թ. ապրիլի 14-ին ժամը 09:30-ին /Արձանագրություն թիվ 3/, որից հետո՝ ս.թ. ապրիլի 14-ին ժամը 20:00-ին, գնումների պաշտոնական տեղեկագրում հրապարակվել է թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2020/51 բողոքը, իսկ ս.թ. ապրիլի 15-ին ժամը՝ 16:05-ին բողոքի վերաբերյալ ծանուցումը ներկայացվել է պատվիրատուին:

1.2 Թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2020/51 բողոքի շրջանակներում «Ալմաքսիմա» ՍՊ ընկերությունը պահանջել է պարտավորեցնել պատվիրատուին փոփոխություն կատարել «ԳՀԱՊՁԲ-2020/16-13-ԵՊԲՀ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերում՝ հրավերի 20-24-րդ չափաբաժինների մասով:

1.3 «Գնումների մասին» ՀՀ օրենքի 51-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն «ԳՀԱՊՁԲ-2020/16-13-ԵՊԲՀ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը ինքնաբերաբար կասեցվել է:

1.4 Բողոքը քննող անձի 08.05.2020թ. թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2020/51 որոշմամբ բողոքը բավարարվել է հետևյալ բովանդակությամբ. «Պարտավորեցնել «ԳՀԱՊՁԲ-2020/16-13-ԵՊԲՀ» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ընթացակարգի հրավերի 20-24-րդ չափաբաժինների տեխնիկական բնութագրերում կատարել փոփոխություն... »:

1.5 Հիմք ընդունելով ՀՀ ֆինանսների նախարարի 06.12.2018 թվականի թիվ 600-Ն հրամանի 28-րդ կետը և հաշվի առնելով, որ 08.05.2020թ. դրությամբ գնահատող հանձնաժողովը տեխնիկապես չի կարող իրականացնել փոփոխություն «ԳՀԱՊՁԲ-2020/16-13-ԵՊԲՀ» ծածկագրով ընթացակարգի հրավերում, պատվիրատուն, ս.թ. մայիսի 15-ին թիվ 09/511 գրությամբ դիմել է ԳԲՔԱ-ԼՕ-2020/51 բողոքը քննող անձին՝ խնդրելով տալ պարզաբանում իր կողմից կայացված որոշման տեխնիկապես կատարման մասին: /Փաստաթուղթ 1/

1.6 Ի պատասխան 15.05.2020թ. թիվ 09/511 գրության, բողոքը քննող անձը ս.թ. մայիսի 25-ին գրավոր հայտնել է, որ բողոքներ քննող անձը օժտված չէ իր կողմից կայացված որոշումը պարզաբանելու իրավասությամբ, ուստի այն ենթակա չէ պարզաբանման, ինչպես նաև նշել է, որ իր կողմից կայացված որոշումը իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել և վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից և անվերապահորեն ենթակա է կատարման: /Փաստաթուղթ 2/

1.7 Գործնական պարզաբանում չստանալու հետևանքով գնահատող հանձնաժողովը հայտնվել է փակուղային իրավիճակում, ուստի պատվիրատուն 01.06.2020թ. թիվ 09/567 գրությամբ դիմել է գնումների ոլորտը կարգավորող լիազոր մարմին հանդիսացող ՀՀ ֆինանսների նախարարություն, խնդրելով տալ մասնագիտական և մեթոդական ցուցում ստեղծված իրավիճակում պատվիրատուի հետագա քայլերի վերաբերյալ: /Փաստաթուղթ 3/

1.8 Ի պատասխան 01.06.2020թ. թիվ 09/567 գրության ՀՀ ֆինանսների նախարարությունը՝ ի դեմս ՀՀ ֆինանսների նախարարի առաջին տեղակալ Կարեն Բրուտյանի, պարզաբանել է, որ հրավերում փոփոխություններ կարող են կատարվել հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուց առնվազն հինգ օրացուցային օր առաջ, իսկ գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու դեպքերը հստակ սահմանված են «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածով: /Փաստաթուղթ 4/

1.9 Եվս մեկ անգամ համոզվելով, որ «ԳՀԱՊՁԲ-2020/16-13-ԵՊԲՀ» ծածկագրով ընթացակարգի հրավերում փոփոխություն հնարավոր չի կատարել, իսկ ընթացակարգը չկայացած հայտարարելու համար բացակայում են իրավական հիմքեր՝ պատվիրատուն 29.06.2020թ. թիվ 09/656 գրությամբ կրկին գրավոր դիմել է բողոքը քննող անձին, ներկայացնելով ՀՀ ֆինանսների նախարարության դիրքորոշումը՝ բողոքարկվող հրավերում փոփոխություն կատարելու անհնարինության վերաբերյալ, ինչպես նաև տեղեկացնելով գնման ընթացակարգը ստիպված շարունակելու գնահատող հանձնաժողովի հնարավոր որոշման մասին: /Փաստաթուղթ 5/

1.10 Ի պատասխան 29.06.2020թ. թիվ 09/656 գրության, բողոքը քննող անձը ս.թ. հուլիսի 3-ին գրավոր հայտնել է հետևյալը. «Որպես ընդունված որոշումների կատարման նկատմամբ հսկողություն իրականացնող անձ՝ հարկ եմ համարում փաստել, որ Պատվիրատուի՝ ընդունված որոշման չկատարման վերաբերյալ ոչ մի պատճառաբանություն, որևիցե կերպով չի կարող հանգեցնել ընդունված որոշման չկատարմանը:» /Փաստաթուղթ 6/

1.11 Ընդունելով այն հանգամանքը, որ իր լիազորությունների շրջանակներում պատվիրատուն իրականացրել է բոլոր հնարավոր գործողությունները թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2020/51 որոշումը կատարելու ուղղությամբ, սակայն պարզվել է, որ վերոհիշյալ որոշումը գործնականում կատարել հնարավոր չէ, ինչպես նաև այն, որ կայացված որոշումը չի կարող այլ կերպ մեկնաբանվել, հանձնաժողովը որոշեց, հիմք ընդունելով լիազոր մարմնի պարզաբանումը, շարունակել ԳՀԱՊՁԲ-2020/16-13-ԵՊԲՀ» ծածկագրով ընթացակարգի գնահատման նիստը:

1.12 1-6 Փաստաթղթերի պատճենները կցվում են սույն արձանագրությանը և համարվում են սույն արձանագրության անբաժանելի մասը:

1.13 Բողոքը քննող անձի կողմից կայացված որոշումը վերացնելու նպատակով պատվիրատուն դիմել է դատարան:

Ընդունվել է որոշում կողմ՝ 4, դեմ՝ 0:

**2. << ԳՀԱՊՁԲ-2020/16-13-ԵՊԲՀ >> ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի 15.04.2020թ. նիստը չեղարկելու ընթացակարգի գնահատման նիստը վերսկսելու մասին**

2.1 Հիմք ընդունելով Գնումների մասին ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ կետի և 51-րդ հոդվածի 1-ին կետի դրույթները՝ հանձնաժողովը արձանագրում է, որ ԳԲՔԱ-ԼՕ-2020/51 ծածկագրով բողոքը հրապարակվել է 14.04.2020թ. ժամը 20.00-ին, Պատվիրատուն բողոքի վերաբերյալ պաշտոնապես ծանուցվել է 15.04.2020թ. ժամը 16:05-ին: Գնահատող հանձնաժողովի հայտերի բացման և գնահատման նիստը տեղի է ունեցել 15.04.2020թ.-ին ժամը 11:30-ին: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ գնահատող հանձնաժողովը ծանուցվել է բողոքի մասին նիստի ավարտից հետո, իսկ ընթացակարգը ինքնաբերաբար կասեցված է համարվել 14.04.2020թ. ժամը 20.00-ից, հանձնաժողովը որոշեց << ԳՀԱՊՁԲ-2020/16-13-ԵՊԲՀ >> ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատման նիստը վերսկսել 08.07.2020թ.-ից:

**3. Տեղեկատվություն գնվելիք ապրանքի գնի և հայտ ներկայացրած մասնակիցի մասին**

3.1 Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 40-րդ կետի դրույթներով՝ հանձնաժողովի նախագահը հրապարակեց գնվելիք ապրանքների գինը՝ մեկ թվով արտահայտված.

| **Հ/հ** | Ապրանքի անվանումը | **Ապրանքի գինը՝ մեկ թվով արտահայտված (ՀՀ** |
|---|---|---|

| | | |
|---|---|---|
| | | դրամ) |
| 1 | Ռենտգեն գունավոր ժապավեն | 750,000.00 |
| 2 | Միզային կաթետր Ֆոլի 6Fr, 2-ճյուղանի | 14,700.00 |
| 3 | Զոնդ ստամոքսային 6Fr | 33,000.00 |
| 4 | Կանյուլա նորածնային անհասների | 13,500.00 |
| 5 | Առաձգական վիրակապ (էլաստիկ բինտ) | 19,500.00 |
| 6 | Օռոզաստրալ զոնդ 26 Fr | 100,000.00 |
| 7 | Սփեյսեր (ինհալյատոր) | 97,500.00 |
| 8 | Իրրիգացիոն ասպիրացիոն համակարգ Ինֆինիտի սարքավորման համար | 630,000.00 |
| 9 | Թել պոլիդիաքսանիոն N 3/0, 2 ծակող ասեղով | 750,000.00 |
| 10 | Թել վիրաբուժական N 1/0, ծակող ասեղով | 55,000.00 |
| 11 | Թել վիրաբուժական N 6/0, ծակող ասեղով | 12,500.00 |
| 12 | Cobas e 411 անալիզատորի սեղմիչ փականի խողովակներ | 200,000.00 |
| 13 | Կծվածքապատճենող թուղթ | 58,800.00 |
| 14 | Տեխնիկական բիպին | 5,400.00 |
| 15 | Գչիրների բիքս | 79,800.00 |
| 16 | Ֆայլերի բիքս | 33,600.00 |
| 17 | Ինքնասոսնձվող ստերիլ. ծրար 2"*7.75"(150*220 մմ) | 450,000.00 |
| 18 | Ինքնասոսնձվող ստերիլ. ծրար (5.25"x10") | 175,000.00 |
| 19 | Պետրիի թասիկ միանվագ օգտագործման համար | 630,000.00 |
| 20 | Դեղապատ ստենտ/2 | 4,960,000.00 |
| 21 | Դեղապատ սետնտ/3 | 5,060,000.00 |
| 22 | Դեղապատ ստենտ/4 | 24,800,000.00 |
| 23 | Դեղապատ սետնտ/5 | 17,077,500.00 |
| 24 | Դեղապատ ստենտ/6 | 16,740,000.00 |
| 25 | Ախտորոշիչ կաթետերների հավաքածու | 3,080,000.00 |
| 26 | Ներգանգային հեղուկի դրենավորման համակարգ | 750,000.00 |
| 27 | Շունտավորման համակարգ | 1,700,000.00 |
| 28 | Բազկային պրոքսիմալ հարթակ | 660,000.00 |
| 29 | 3.5մմ կորտիկալ պտուտակ | 100,000.00 |
| 30 | 4.5մմ կորտիկալ պտուտակ | 110,000.00 |
| 31 | Ազդրային դինամիկ պտուտակի համակարգ ազդրային հարթակ/1 | 1,350,000.00 |
| 32 | Ազդրային դինամիկ պտուտակի համակարգ ազդրային հարթակ/2 | 1,350,000.00 |
| 33 | Ազդրային անտերոգրադ արգելակող մեխ | 740,000.00 |
| 34 | Ազդրային հարթակ | 540,000.00 |
| 35 | Ճաճանչային/ծղիկային հարթակ | 680,000.00 |
| 36 | Ոլոքային/բազկային հարթակ | 880,000.00 |
| 37 | Ոլոքային անտերոգրադ արգելակող մեխ | 1,110,000.00 |
| 38 | Ոլոքային դիստալ դրսային հարթակ | 680,000.00 |
| 39 | Միզածորանային կաթետերիկ 5Fr բաց ծայրով | 35,000.00 |
| 40 | Միզածորանային կաթետերիկ 6Fr բաց ծայրով | 35,000.00 |
| 41 | Ուղղորդիչ 0.028 | 180,000.00 |
| 42 | Բիպոլյար աշխատանքային էլեմենտ ակտիվ | 1,047,000.00 |
| 43 | Ռեզեկտոսկոպի արտաքին տուբուս 26Fr | 273,000.00 |
| 44 | Ռեզեկտոսկոպի ներքին տուբուս 24Fr | 450,000.00 |
| 45 | Կոագուլյացիոն բիպոլյար էլոկտրոդ 24-26FR 12/30° | 399,000.00 |
| 46 | Բիպոլյար կտրող էլոկտրոդ 24FR 12/30° | 434,000.00 |
| 47 | Կեռ բիպոլյար էլոկտրոդ 22-26FR 12/30° | 85,600.00 |

| | | |
|---|---|---|
| 48 | Ճկվող բիոպսիոն պինցետ | 420,500.00 |
| 49 | Ճկվող սեղմիչ | 420,500.00 |
| 50 | Լազերային ֆիբրային մալուխ | 940,000.00 |
| 51 | Նշտար կիսակլոր 20,5 Fr | 50,000.00 |
| 52 | Նշտար 20,5 Fr | 50,000.00 |
| 53 | Նշտար մանգաղատիպ 20,5 Fr | 50,000.00 |
| 54 | Բիպոլյար մալուխ/1 | 80,000.00 |
| 55 | Բիպոլյար պինցետ ուղիղ | 85,000.00 |
| 56 | Բիպոլյար մալուխ/2 | 35,000.00 |
| 57 | Բիպոլյար մկրատ | 310,000.00 |
| 58 | Բիպոլյար մալուխ/3 | 62,000.00 |
| 59 | Ուրետրոցիստոսկոպի պատյան | 380,000.00 |

3.2 Ընդունել ի գիտություն, որ սահմանված ժամկետում հայտեր են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

| Հ/հ | անվանումը | էլեկտրոնային փոստի հասցեն, հեռախոս | Հասցե՝ |
|---|---|---|---|
| 1 | <<Կոնցեռն Էներգոմաշ>> ՓԲԸ | Lawyer@c-e.am, Հեռ.՝ 010-209-777, 010- 209-775 | ՀՀ, ք.Երևան,Ազատության 26/8 |
| 2 | <<Լաէկա>> ՀՁ ՍՊԸ | laekatenders@gmail.com, հեռ.՝ 091-27-77-73 | ՀՀ, ք.Երևան,Վ. Համբարձումյան 3-18 |
| 3 | <<Մեդտեխսերվիս>> ՍՊԸ | medtechservice@mail.ru, հեռ.՝ 010-53-36-30/50 | ՀՀ, ք.Երևան,Լեո 12 |
| 4 | <<Մեգիել>> ՍՊԸ | Megiel.tender@mail.ru, հեռ.՝ 010-56-54-76 | ՀՀ, ք.Երևան,Դեմիրճյան 40/173 |
| 5 | <<Նատալի Ֆարմ>> ՍՊԸ | Natalipharm@bk.ru, հեռ.՝ 010-744-212 | ՀՀ, ք.Երևան,Տիչինա 3-րդ նրբ 2/2 |
| 6 | <<Պրոֆտեստ>> ՍՊԸ | ProftestLLC@gmail.com, tendersproftest@gmail.com, հեռ.՝ 055-09-58-58, 095- 59-58-58 | ՀՀ, ք.Երևան,Կողբացու 28/72 |
| 7 | Ա/Ձ <<Արսեն Գևոգրյան Արշավիրի>> | Arsen2006@bk.ru, հեռ.՝ 077-738-367 | ՀՀ, ք.Երևան, Բաբաջանյան 16 |
| 8 | <<Էսզեթ ֆարմա>> ՍՊԸ | szpharma@yahoo.com, հեռ.՝ 011-53-45-56 | ՀՀ, ք.Երևան,Մաշտոցի 16ա/2 |

Ընդունվել է որոշում՝ կողմ-4, դեմ-0:

**4. Տեղեկատվություն մասնակիցների ներկայացրած հայտերի՝ պահանջվող (նախատեսված) փաստաթղթերի առկայության և հրավերով սահմանված վավերապայմաններին համապատասխան կազմված լինելու մասին**

4.1 Ընթացակարգի մասնակցի կողմից ներկայացված հայտում առկա են պահանջվող (նախատեսված) փաստաթղթերը և կազմված են հրավերով սահմանված վավերապայմաններին համապատասխան,բացառությամբ.

- <<Մեգիել>> ՍՊԸ-ի, որի կողմից ներկայացված հայտում 21-րդ և 23-րդ չափաբաժինների մասով բացակայում է ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից տվյալ ապրանքի վաճառքի թույտվությունը հավաստող՝ ավտորիզացիոն նամակը:
- <<Պրոֆտեստ>> ՍՊԸ-ի, որի կողմից ներկայացված հայտի՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիր հավելվածում (Հավելված 1.1) 22-րդ չափաբաժնի մասով ներկայացված ապրանքի տեխնիկական բնութագրում բալոնի միջին չափսը հստակեցման կարիք ունի, ինչպես

նաև բացակայում է ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից տվյալ ապրանքի վաճառքի թույտվությունը հավաստող՝ ավտորիզացիոն նամակը:

- <<Լաէկս>> ՀՁ ՍՊԸ-ի, որի կողմից ներկայացված հայտի՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիր հավելվածում (Հավելված 1.1) 20-րդ և 24-րդ չափաբաժինների մասով «Պարտադիր պայման է հանդիսանում՝ Մասնակիցը հայտով ներկայացնում է ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից տվյալ ապրանքի վաճառքի թույտվությունը հավաստող՝ ավտորիզացիոն նամակ, իսկ պայմանագրի կատարման փուլում ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից երաշխիքային նամակ» նախադասությունը բացակայում է, ինչպես նաև բացակայում է ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից տվյալ ապրանքի վաճառքի թույտվությունը հավաստող՝ ավտորիզացիոն նամակը:

4.2 Մասնակիցների կողմից հայտի ապահովումները ներկայացվել են սահմանված ժամկետներում, գտնվում են վավերականության ժամկետում, ուստի նոր՝ փոփոխված հայտի ապահովումներ ներկայացնելու կարիք չկա:

4.3 <<Արսեն Գևոգրյան Արշավիրի>> Ա/Ձ-ի, որի կողմից ներկայացված հայտի գնային առաջարկ հավելվածը (Հավելված 2) թիվ 28, 29, 30, 31, 32, 33, 34, 35, 36, 37, 38 չափաբաժնի մասով էլեկտրոնային գնումների իրականացումն ապահովող համակարգում (այսուհետև՝ Համակարգ)՝ www.armeps.am-ում կցված չէ, ինչպես նաև կցված չէ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիր հավելվածը (Հավելված 1.1): Հանձնաժողովը որոշմամբ <<Արսեն Գևոգրյան Արշավիրի>> Ա/Ձ -ի կողմից ներկայացված հայտը վերոնշյալ չափաբաժինների մասով մերժվել է /ՀՀ կառավարության 526-Ն որոշման 40-րդ կետի 4-րդ ենթակետ/:

Ընդունվել է որոշում՝ կողմ-4, դեմ-0:

**5. Տեղեկատվություն հայտ ներկայացրած մասնակիցների գնային առաջարկների մասին**

5.1 Մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկները ներկայացված են հավելված 1-ում.
Ընդունվել է որոշում՝ կողմ-4, դեմ-0:

**6. << ԳՀԱՊՁԲ-2020/16-13-ԵՊԲՀ >> ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը թիվ 1, 2, 3, 4, 5, 6, 7, 10, 15, 16, 17, 18, 19, 26, 27, 28, 29, 30, 31, 32, 33, 34, 35, 36, 37, 38, 39, 40, 41 չափաբաժինների մասով չկայացած հայտարարելու մասին**

6.1 Ղեկավարվելով <<Գնումների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի դրույթներով՝ << ԳՀԱՊՁԲ-2020/16-13-ԵՊԲՀ >> ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը թիվ 1, 2, 3, 4, 5, 6, 7, 10, 15, 16, 17, 18, 19, 26, 27, 39, 40, 41 չափաբաժինների մասով հայտարարել չկայացած:

6.2 Ղեկավարվելով <<Գնումների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի դրույթներով՝ << ԳՀԱՊՁԲ-2020/16-13-ԵՊԲՀ >> ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը թիվ 28, 29, 30, 31, 32, 33, 34, 35, 36, 37, 38 չափաբաժինների մասով հայտարարել չկայացած:

Ընդունվել է որոշում՝ կողմ-4, դեմ-0:

**7. << ԳՀԱՊՁԲ-2020/16-13-ԵՊԲՀ>> ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի վերաբերյալ ներկայացված հիմնավորումների մասին**

7.1 << ԳՀԱՊՁԲ-2020/16-13-ԵՊԲՀ >> ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի վերաբերյալ հիմնավորումներ չեն ներկայացվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ-4, դեմ-0:

**8. << ԳՀԱՊՁԲ-2020/16-13-ԵՊԲՀ >> ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին**

8.1 Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 41-րդ կետի դրույթներով՝ հանձնաժողովը որոշեց.

- Մեկ աշխատանքային օրով կասեցնել սույն նիստը և էլեկտրոնային եղանակով տեղեկացնել 4.1 կետով նշված մասնակիցներին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում՝ կողմ-4, դեմ-0:

**9. Հանձնաժողովի նիստին ներկա անդամների և քարտուղարի անուն-ազգանունները և ստորագրությունները**

| | | |
|---|---|---|
| **Հանձնաժողովի նախագահ՝** | ____________________<br>*(ստորագրությունը)* | **Լ.Դանիելյան** |
| **Հանձնաժողովի անդամներ՝** | ____________________<br>*(ստորագրությունը)* | **Ա.Պետրոսյան** |
| | ____________________<br>*(ստորագրությունը)* | **Ա.Հակոբյան** |
| | ____________________<br>*(ստորագրությունը)* | **Է.Միրոյան** |
| **Հանձնաժողովի քարտուղար՝** | ____________________<br>*(ստորագրությունը)* | **Մ. Ղարիբյան** |

| Չ/Հ | Անվանում | Նախահաշվային գին | Մասնակից | Ինքնարժեք | Շահույթ | Գինը առանց ԱԱՀ | ԱԱՀ | Գինը ԱԱՀ-ն ներառյալ |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Ռենտգեն զունավոր ժապավեն | 750,000.00 | | | | 0.00 | 0.00 | 0.00 |
| 2 | Միզային կաթետր Ֆոլի 6Fr, 2-ճյուղանի | 14,700.00 | | | | 0.00 | 0.00 | 0.00 |
| 3 | Զոնդ ստամոքսային 6Fr | 33,000.00 | | | | 0.00 | 0.00 | 0.00 |
| 4 | Կանյուլա նորածնային անհասների | 13,500.00 | | | | 0.00 | 0.00 | 0.00 |
| 5 | Առաձգական վիրակապ (էլաստիկ բինտ) | 19,500.00 | | | | 0.00 | 0.00 | 0.00 |
| 6 | Օռոգաստրալ զոնդ 26 Fr | 100,000.00 | | | | 0.00 | 0.00 | 0.00 |
| 7 | Սփեյսեր (ինհալյատոր) | 97,500.00 | | | | 0.00 | 0.00 | 0.00 |
| 8 | Իրրիգացիոն ասպիրացիոն համակարգ Ինֆինիտի սարքավորման համար | 630,000.00 | Նատալի Ֆարմ ՍՊԸ | 326,203.29 | 213,796.71 | 540,000.00 | 0.00 | 540,000.00 |
| 9 | Թել պոլիդիաքսանիոն N 3/0, 2 ծակող ասեղով | 750,000.00 | Նատալի Ֆարմ ՍՊԸ | 516,277.25 | 83,722.75 | 600,000.00 | 0.00 | 600,000.00 |
| 10 | Թել վիրաբուժական N 1/0, ծակող ասեղով | 55,000.00 | | | | 0.00 | 0.00 | 0.00 |
| 11 | Թել վիրաբուժական N 6/0, ծակող ասեղով | 12,500.00 | Նատալի Ֆարմ ՍՊԸ | 8,228.59 | 4,271.42 | 12,500.00 | 0.00 | 12,500.00 |
| 12 | Cobas e 411 անալիզատորի սեղմիչ փականի խողովակներ | 200,000.00 | Կոնցեռն Էներգոմաշ ՓԲԸ | 125,000.00 | 41,666.67 | 166,666.67 | 33,333.33 | 200,000.00 |
| 13 | Կծվածքապատճենող թուղթ | 58,800.00 | Էսգեթ ՍՊԸ | 42,000.00 | 7,000.00 | 49,000.00 | 9,800.00 | 58,800.00 |
| 14 | Տեխնիկական բիպին | 5,400.00 | Էսգեթ ՍՊԸ | 6,300.00 | 1,200.00 | 7,500.00 | 0.00 | 7,500.00 |
| 15 | Գչիրների բիքս | 79,800.00 | | | | 0.00 | 0.00 | 0.00 |
| 16 | Ֆայլերի բիքս | 33,600.00 | | | | 0.00 | 0.00 | 0.00 |
| 17 | Ինքնասոսնձվող ստերիլ. ծրար 2"*7.75"(150*220 մմ) | 450,000.00 | | | | 0.00 | 0.00 | 0.00 |
| 18 | Ինքնասոսնձվող ստերիլ. ծրար (5.25"x10") | 175,000.00 | | | | 0.00 | 0.00 | 0.00 |
| 19 | Պետրիի թասիկ միանվագ օգտագործման համար | 630,000.00 | | | | 0.00 | 0.00 | 0.00 |
| 20 | Դեղապատ ստենտ/2 | 4,960,000.00 | Լաէկա ՍՊԸ | 4,000,000.00 | 400,000.00 | 4,400,000.00 | 0.00 | 4,400,000.00 |
| 21 | Դեղապատ սետնտ/3 | 5,060,000.00 | Մեգիէլ ՍՊԸ | 3,240,000.00 | 920,000.00 | 4,160,000.00 | 0.00 | 4,160,000.00 |
| 22 | Դեղապատ ստենտ/4 | 24,800,000.00 | Պրոֆտեստ ՍՊԸ | 20,000,000.00 | 4,800,000.00 | 24,800,000.00 | 0.00 | 24,800,000.00 |
| 23 | Դեղապատ սետնտ/5 | 17,077,500.00 | Մեգիէլ ՍՊԸ | 10,935,000.00 | 3,105,000.00 | 14,040,000.00 | 0.00 | 14,040,000.00 |
| 24 | Դեղապատ ստենտ/6 | 16,740,000.00 | Լաէկա ՍՊԸ | 13,450,000.00 | 1,400,000.00 | 14,850,000.00 | 0.00 | 14,850,000.00 |
| 25 | Ախտորոշիչ կաթետերների հավաքածու | 3,080,000.00 | Լաէկա ՍՊԸ | 3,814,000.00 | 400,000.00 | 4,214,000.00 | 0.00 | 4,214,000.00 |
| 26 | Ներգանգային հեղուկի դրենավորման համակարգ | 750,000.00 | | | | 0.00 | 0.00 | 0.00 |
| 27 | Շունտավորման համակարգ | 1,700,000.00 | | | | 0.00 | 0.00 | 0.00 |
| 28 | Բազկային պրոքսիմալ հարթակ | 660,000.00 | | | | 0.00 | 0.00 | 0.00 |
| 29 | 3.5մմ կորտիկալ պտուտակ | 100,000.00 | | | | 0.00 | 0.00 | 0.00 |
| 30 | 4.5մմ կորտիկալ պտուտակ | 110,000.00 | | | | 0.00 | 0.00 | 0.00 |
| 31 | Ազդրային դինամիկ պտուտակի համակարգ ազդրային հարթակ/1 | 1,350,000.00 | | | | 0.00 | 0.00 | 0.00 |
| 32 | Ազդրային դինամիկ պտուտակի համակարգ ազդրային հարթակ/2 | 1,350,000.00 | | | | 0.00 | 0.00 | 0.00 |
| 33 | Ազդրային անտերոգրադ արգելակող մեխ | 740,000.00 | | | | 0.00 | 0.00 | 0.00 |
| 34 | Ազդրային հարթակ | 540,000.00 | | | | 0.00 | 0.00 | 0.00 |
| 35 | Ճաճանչային/ծղիկային հարթակ | 680,000.00 | | | | 0.00 | 0.00 | 0.00 |
| 36 | Ոլոքային/բազկային հարթակ | 880,000.00 | | | | 0.00 | 0.00 | 0.00 |
| 37 | Ոլոքային անտերոգրադ արգելակող մեխ | 1,110,000.00 | | | | 0.00 | 0.00 | 0.00 |
| 38 | Ոլոքային դիստալ դրսային հարթակ | 680,000.00 | | | | 0.00 | 0.00 | 0.00 |
| 39 | Միզածորանային կաթետերիկ 5Fr բաց ծայրով | 35,000.00 | | | | 0.00 | 0.00 | 0.00 |
| 40 | Միզածորանային կաթետերիկ 6Fr բաց ծայրով | 35,000.00 | | | | 0.00 | 0.00 | 0.00 |
| 41 | Ուղղորդիչ 0.028 | 180,000.00 | | | | 0.00 | 0.00 | 0.00 |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 43 | Ռեզեկտոսկոպի արտաքին տուբուս 26Fr | 273,000.00 | Մեդտեխսերվիս ՍՊԸ | 247,950.00 | 37,050.00 | 285,000.00 | 0.00 | 285,000.00 |
| 44 | Ռեզեկտոսկոպի ներքին տուբուս 24Fr | 450,000.00 | Մեդտեխսերվիս ՍՊԸ | 404,550.00 | 60,450.00 | 465,000.00 | 0.00 | 465,000.00 |
| 45 | Կոագուլյացիոն բիպոլյար էլոկտրոդ 24-26FR 12/30° | 399,000.00 | Մեդտեխսերվիս ՍՊԸ | 353,220.00 | 52,780.00 | 406,000.00 | 0.00 | 406,000.00 |
| 46 | Բիպոլյար կտրող էլոկտրոդ 24FR 12/30° | 434,000.00 | Մեդտեխսերվիս ՍՊԸ | 435,000.00 | 65,000.00 | 500,000.00 | 0.00 | 500,000.00 |
| 47 | Կեռ բիպոլյար էլոկտրոդ 22-26FR 12/30° | 85,600.00 | Մեդտեխսերվիս ՍՊԸ | 74,472.00 | 11,128.00 | 85,600.00 | 0.00 | 85,600.00 |
| 48 | Ճկվող բիոպսիոն պինցետ | 420,500.00 | Մեդտեխսերվիս ՍՊԸ | 374,535.00 | 55,965.00 | 430,500.00 | 0.00 | 430,500.00 |
| 49 | Ճկվող սեղմիչ | 420,500.00 | Մեդտեխսերվիս ՍՊԸ | 374,535.00 | 55,965.00 | 430,500.00 | 0.00 | 430,500.00 |
| 50 | Լազերային ֆիբրային մալուխ | 940,000.00 | Մեդտեխսերվիս ՍՊԸ | 835,200.00 | 124,800.00 | 960,000.00 | 0.00 | 960,000.00 |
| 51 | Նշտար կիսակլոր 20,5 Fr | 50,000.00 | Մեդտեխսերվիս ՍՊԸ | 47,850.00 | 7,150.00 | 55,000.00 | 0.00 | 55,000.00 |
| 52 | Նշտար 20,5 Fr | 50,000.00 | Մեդտեխսերվիս ՍՊԸ | 47,850.00 | 7,150.00 | 55,000.00 | 0.00 | 55,000.00 |
| 53 | Նշտար մանգաղատիպ 20,5 Fr | 50,000.00 | Մեդտեխսերվիս ՍՊԸ | 47,850.00 | 7,150.00 | 55,000.00 | 0.00 | 55,000.00 |
| 54 | Բիպոլյար մալուխ/1 | 80,000.00 | Մեդտեխսերվիս ՍՊԸ | 78,300.00 | 11,700.00 | 90,000.00 | 0.00 | 90,000.00 |
| 55 | Բիպոլյար պինցետ ուղիղ | 85,000.00 | Մեդտեխսերվիս ՍՊԸ | 78,300.00 | 11,700.00 | 90,000.00 | 0.00 | 90,000.00 |
| 56 | Բիպոլյար մալուխ/2 | 35,000.00 | Մեդտեխսերվիս ՍՊԸ | 34,800.00 | 5,200.00 | 40,000.00 | 0.00 | 40,000.00 |
| 57 | Բիպոլյար մկրատ | 310,000.00 | Մեդտեխսերվիս ՍՊԸ | 278,400.00 | 41,600.00 | 320,000.00 | 0.00 | 320,000.00 |
| 58 | Բիպոլյար մալուխ/3 | 62,000.00 | Մեդտեխսերվիս ՍՊԸ | 59,160.00 | 8,840.00 | 68,000.00 | 0.00 | 68,000.00 |
| 59 | Ուրետրոցիստոսկոպի պատյան | 380,000.00 | Մեդտեխսերվիս ՍՊԸ | 339,300.00 | 50,700.00 | 390,000.00 | 0.00 | 390,000.00 |

«ԵՐԵՎԱՆԻ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

"YEREVAN STATE MEDICAL UNIVERSITY
AFTER MKHITAR HERATSI" FOUNDATION

ՀՀ, 0025, Երևան, Կորյունի փ. 2 • Koryun St. 2, Yerevan, 0025, Republic of Armenia • Tel: +374 10 582532 • Fax: +374 10 564111 • URL: www.ysmu.am • E-mail: genserv@ysmu.am

թիվ 09/511

«15» 05 2020թ.

**Փաստաթուղթ N 1**

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔԸ
ՔՆՆՈՂ ԱՆՁ ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆԻՆ

Պատճենը՝ *ՀՀ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ,*
*ՊԱՐՈՆ ԱՏՈՄ ՋԱՆՋՈՒՂԱԶՅԱՆԻՆ*

**Հարգելի պարոն Օհանյան.**

«Ալմաքսիմա» ՍՊ ընկերության դիմումի հիման վրա ԳԲՔԱ-ԼՕ-2020/51 ծածկագրով բողոքի շրջանակներում 2020 թվականի մայիսի 8-ին Ձեր որոշմամբ (այսուհետ՝ նաև Որոշում) բավարարվել է այն:

*Բողոք բերող անձը նշել է, որ ՀՀ Կառավարության 04.05.2017 թվականի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 21-րդ կետի 1-ին ենթակետի ա/ պարբերությամբ սահմանված դրույթը կիրառելի չէ դեղապատ սփենտների համար և պահանջել է **<u>վերացնել ընթացակարգի</u>** հրավերի 20-24-րդ չափաբաժիններով գնման առարկաների տեխնիկական բնութագրերում սահմանված «Պարտադիր պայման է հանդիսանում՝ մասնակիցը հայտով ներկայացնում է ապրանքը արտադրողից, կամ վերջինիս ներկայացուցչից տրված ապրանքի վաճառքի թույլտվությունը հավաստող՝ ավտորիզացիոն նամակ, իսկ պայմանագրի կատարման փուլում ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից երաշխիքային նամակ» պահանջը:*

Որոշումը Համալսարան է մուտք եղել 13.05.2020 թվականին:

23.04.2020 թվականին թիվ 09/472 գրությամբ Համալսարանը գնումների բնագավառում պետական լիազոր մարմնին՝ ՀՀ ֆինանսների նախարարությունն էր ուղարկել ՀՀ Կառավարության 04.05.2017 թվականի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի պարզաբանման առումով 2 խնդրահարույց հարցերը, **<u>որոնցից սույն գործով բողոքին էր վերաբերումն միայն 1-ին հարցը</u>**:

<u>Սույն գործով բողոքի շրջանակներում պարզաբանման ենթակա հարցը (1-ին հարց) հետևյալն էր.</u>

*«Արդյո՞ք ՀՀ Կառավարության 04.05.2017 թվականի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 21-րդ կետի 1-ին ենթակետի ա) պարբերության մեջ նշված* ***«պայմանագրի կատարման փուլում ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից երաշխիքային նամակի կամ համապատասխանության սերտիֆիկատի ներկայացման անհրաժեշտությունը, եթե դրանք կիրառելի են տվյալ ապրանքի համար»*** *արտահայտությունը կիրառելի չէ բժշկական նշանակության այնպիսի ապրանքների համար, որոնք հիվանդների կյանքի համար ունեն խիստ կենսական նշանակություն, օրինակ, ինվազիվ սրտաբանական պարագաների համար: Ձեռք բերվող ապրանքները նկարագրելիս պահպանելով գնումների օրենսդրության բոլոր պահանջները, արդյո՞ք հենց այս պարբերությունը չէ որ կարող է օգնել պատվիրատուին գոնե չնչին ծնով ապահովագրվել շուկայում առկա բազմազան էժանագին և անորակ ապրանքների ձեռքբերումից, հակառակ դեպքում ե՞րբ է կիրառելի այս կետը»:*

Համալսարանի գրությանն ի պատասխան ՀՀ Ֆինանսների նախարարությունն իր **Գրության (այսուհետ՝ Գրություն) 1-ին կետով տրվել հետևյալ պարզաբանում.**

*«Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը՝ ընդգրկվում են պայմանագրում:*

*Միաժամանակ՝ ՀՀ Կառավարության 04.05.2017 թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 11-րդ և 13-րդ կետերով սահմանված է, որ պատասխանատու ստորաբաժանումն է կազմում և հաստատում գնման հայտը, որի նախագծմանը մասնակցող անձը (անձինք) պետք է ունենան գնման առարկան բնութագրելու մասնագիտական կարողություն, ինչը որոշվում է՝ ելնելով գնման առարկայի տեսակից:*

***... գնման հայտի նախագծման մասնակցող անձը կարող է որոշել և սահմանել կարգի 21-րդ կետով նախատեսված պահանջի՝ գնվելիք ապրանքի նկատմամբ կիրառման հնարավորությունը»:***

*Պետական լիազոր մարմնի կողմից տրված մեկնաբանությունը ավելի քան բավարար էր «Ալմաքսիմա» ՍՊ ընկերության բողոքը մերժելու համար, սակայն զարմանալիորեն կայացվել է բոլորովին այլ՝ անհիմն որոշում:*

Ձեր 08.05.2020 թվականի թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2020/5 որոշմամբ նշել եք հետևյալը. (մեջբերում) *«Պարտավորեցնել «ԳՀԱՊՁԲ-2020/16-13-ԵՊԲՀ» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին, ընթացակարգի* ***հրավերի 20-24-րդ չափաբաժինների տեխնիկական բնութագրերում կատարել փոփոխություն****՝ համապատասխանեցնելով Կարգի 21-րդ կետի 1-ին ենթակետի «ա» սահմանված դրույթներին, այն է՝ «Մասնակիցը պայմանագրի կատարման փուլում ներկայացնում է ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից տվյալ ապրանքի թույլտվությունը հավաստող՝* ***ավտորիզացիոն նամակ, և*** *ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից* ***երաշխիքային նամակ****» (մեջբերման ավարտ):*

Տեղեկացնում ենք, որ Ձեր թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2020/5 որոշումն ընդունվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքով, ՀՀ Կառավարության 04.05.2017 թվականի թիվ 526-Ն որոշմամբ, ՀՀ ֆինանսների նախարարի 06.12.2018 թվականի թիվ 600-Ն հրամանով նախատեսված նյութական ու

ընթացակարգային պահանջների կոպտագույն խախտմամբ, որի առնչությամբ Համալսարանը ՀՀ օրենսդրությամբ նախատեսված համապատասխան միջոցներ է ձեռնարկում:

Որպես լրացուցիչ տեղեկություն հայտնում ենք, որ նշված գործով 17.04.2020 թվականին Համալսարանի կողմից ներկայացված առաջին դիրքորոշմամբ հայտնել էինք, որ *06.04.2020 թվականին Համալսարանի (պատվիրատուի) կողմից հայտարարված «ԳՀԱՊՁԲ-2020/16-13-ԵՊԲՀ» ծածկագրով գնանշման հարցման միջոցով բժշկական նշանակության ապրանքների և բժշկական գործիքների գնման ընթացակարգի* ***հայտերի բացումը տեղի է ունեցել 14.04.2020 թ.-ին*** *ժամը 09.30-ին,* ***բողոքի վերաբերյալ ծանուցումը Համալսարանը ստացել է 15.04.2020թ.-ին*** *ժամը՝ 16:05-ին, իսկ* ***հայտերի բացման նիստի արձանագրությունը տեղեկագրում հրապարակվել է՝ 15.04.2020 թ.-ին»:***

ՔԱՆԻ ՈՐ ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆ ԻՐԱՎԱՊԱՐՏԱԴԻՐ Է, ԻՍԿ ՆՄԱՆ ՈՐՈՇՄԱՄԲ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ՀՆԱՐԱՎՈՐ ՉԻ ԿԱՏԱՐԵԼ ՎԵՐՈՀԻՇՅԱԼ ՀԻՄՆԱՎՈՐՄԱՄԲ, ՈՒՍՏԻ ՈՐՊԵՍ ՈՐՈՇՈՒՄՆ ԸՆԴՈՒՆԱԾ ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁ ԽՆԴՐՈՒՄ ԵՆՔ ՊԱՐԶԱԲԱՆԵԼ ՁԵՐ ԹԻՎ ԳԲՔԱ-ԼՕ-2020/51 ՈՐՈՇՈՒՄԻՑ ԲԽՈՂ՝ ՊԱՐԶԱԲԱՆՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՀԵՏԵՎՅԱԼԸ ՀԱՐՑԵՐԸ՝

1. *Արդյո՞ք Որոշման պահանջը վերաբերում է միայն թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2020/51 ծածկագրով բողոքին, թե այն կայացվել է ապագայում իրականացվելիք բոլոր* ***նմանատիպ ապրանքների ձեռքբերման*** *նպատակով գնման ընթացակարգերին (նմանատիպ այլ մրցույթներին).*

2. *Եթե Որոշումը վերաբերում է միայն թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2020/51 բողոքին, ապա առկա՞ են արդյոք այնպիսի մեխանիզմներ, միջոցներ, գործիքներ, ընթացակարգեր կամ իրավանորմեր, որոնք հնարավորություն են տալիս ամիսներ առաջ էլեկտրոնային կարգով ուղարկված կամ gnumner.am կայքի միջոցով ներբեռնված, գեներացված մրցույթի հրավերում՝ տեխնիկական բնութագրում կատարել որևէ փոփոխություն, այն դեպքում, երբ ընթացակարգի հայտերի բացումը արդեն տեղի է ունեցել՝ գնումների մասին օրենսդրության պահանջներին համապատասխան:*

3. *Առկա՞ է արդյոք այնպիսի իրավական նորմեր, որոնց հիման վրա հնարավոր կլինի թիվ ԳՀԱՊՁԲ-2020/16-13-ԵՊԲՀ ծածկագրով ընթացակարգի* ***հրավերի տեխնիկական բնութագրերում կատարել փոփոխություն և ընթացակարգը հայտարարել չկայացած, այն դեպքում երբ ընթացակարգի հայտերի բացումը տեղի է ունեցել:***

***Քանի որ Ձեր Որոշման պահանջների կատարումը Համալսարանի (Պատվիրատուի) համար տարակարծությունների, տարընկալումների տեղիք է տալիս, որի առկայության պայմաններում այն գործնականում հնարավոր չէ որևէ ձևով կատարել, հետևաբար կարիքն առաջանալու կապակցությամբ խնդրում ենք պարզաբանել թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2020/51 որոշման հետ կապված վերոնշյալ հարցերը՝ համապատասխան իրավական նորմերի մատնանշմամբ (իրավական ակտ, հոդված կետ):***

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ ԱՐՄԵՆ ՄՈՒՐԱԴՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան, «25» մայիսի, 2020թ.

**Փաստաթուղթ N 2**

**«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի ռեկտոր Ա. Մուրադյանին**

*Հասցե՝ ք. Երևան, Կորյունի 2*

**Հարգելի պարոն Մուրադյան,**

Ի պատասխան Ձեր 15.05.2020թ.-ի թիվ 09/511 գրության հայտնում եմ հետևյալը.

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքով գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից կայացված որոշման պարզաբանման վերաբերյալ որևէ դրույթ սահմանված չէ, բողոքներ քննող անձն օժտված չէ իր կողմից կայացված որոշումը պարզաբանելու իրավասությամբ, ուստի այն ենթակա չէ պարզաբանման:

2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 6-րդ (Օրինականության սկզբունքը) հոդվածի 1-ին մասի համաձայն՝ **պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով:**

Միաժամանակ՝

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ֆինանսների նախարարի 06.12.2018թ.-ի թիվ 600-Ն հրամանով հաստատված «Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի գործունեության» կարգի՝

- 26-րդ կետի համաձայն՝ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում մասնակի, միայն դատարանի կողմից:

ք. Երևան, Կոմիտաս 54 Բ, Հեռ. (+374) 11 28 93 25, Էլ.փոստ. gbqa_ohanyan@mail.ru

- 27-րդ կետի համաձայն՝ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից ընդունված որոշումը ենթակա է անվերապահ կատարման, եթե այն դատական կարգով չի վերացվել:

Վերոնշյալ իրավական նորմերից ելնելով՝ հստակ է, որ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ***որոշումն իրավապարտադիր է***, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, ***միայն դատարանի կողմից***: Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից ընդունված ***որոշումը ենթակա է անվերապահ կատարման***, եթե այն ***դատական կարգով չի վերացվել:***

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ

ք. Երևան, Կոմիտաս 54 ^բ^, Հեռ. (+374) 11 28 93 25, Էլ.փոստ. gbqa_ohanyan@mail.ru

«ԵՐԵՎԱՆԻ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

"YEREVAN STATE MEDICAL UNIVERSITY
AFTER MKHITAR HERATSI" FOUNDATION

ՀՀ, 0025, Երևան, Կորյունի փ. 2 • Koryun St. 2, Yerevan, 0025, Republic of Armenia • Tel: +374 10 582532 • Fax: +374 10 564111 • URL: www.ysmu.am • E-mail: genserv@ysmu.am

թիվ 09/567

«01» 06 2020թ.

**Փաստաթուղթ N 3**

ՀՀ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝

ՊԱՐՈՆ ԿԱՐԵՆ ԲՐՈՒՏՅԱՆԻՆ

*Հարգելի Պարոն Բրուտյան*

*ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից ԳԲՔԱ-ԼՕ-2020/51 բողոքի վերաբերյալ 08.05.2020թ. կայացված որոշման գործնականում կատարման անհնարինության հետևանքով ստեղծվել է մի իրավիճակ, որի հետևանքով հնարավոր չէ շարունակել կամ չեղյալ հայտարարել գնման ընթացակարգը՝ բողոքարկված չափաբաժինների մասով:*

*Սույն թվականի ապրիլի 6-ին «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի կողմից հայտարարվել է «ԳՀԱՊՁԲ-2020/16-13-ԵՊԲՀ» ծածկագրով գնանշման հարցման միջոցով գնման ընթացակարգ, որի հրավերի 20-24-րդ չափաբաժիններով սահմանված են մարդու սրտի վիրահատության համար նախատեսված դեղապատ ստենտեր:*

*Նշված ընթացակարգի հրավերի 20-24-րդ չափաբաժինների մասով սահմանված տեխնիկական բնութագրերի մասով «Ալմաքսիմա» ՍՊԸ-ի կողմից 13.04.2020թ. նախաձեռնվել է բողոք: Հայտերի բացումը տեղի է ունեցել ս.թ.ապրիլի 14-ին ժամը 09.30-ին: Բողոքը քննող անձի կողմից բողոքը հրապարակվել է ս.թ. ապրիլի 14-ին ժամը 20:00-ին: Բողոքի վերաբերյալ ծանուցումը ստացել ենք ս.թ. ապրիլի 15-ին ժամը՝ 16:05-ին:*

*Թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2020/51 բողոքի շրջանակներում բողոքաբեր անձը պահանջել է պարտավորեցնել պատվիրատուին կատարելու փոփոխություն ընթացակարգի հրավերի 20-24-րդ չափաբաժինների տեխնիկական բնութագրերում:*

*Ս.թ. մայիսի 8-ի գնումների հետ կապված բողոք քննող անձի կայացված որոշմամբ սահմանված է՝ «Ալմաքսիմա» ՍՊԸ-ի կողմից 13.04.2020թ. ներկայացված թիվ ԳԲՔԱ-*

ԼՕ-2020/51 ծածկագրով բողոքը բավարարել: Պարտավորեցնել «ԳՀԱՊՁԲ-2020/16-13-ԵՊԲՀ» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ընթացակարգի հրավերի 20-24-րդ չափաբաժինների տեխնիկական բնութագրերում կատարել համապատասխան փոփոխություն:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքը քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում մասնակի միայն դատարանի կողմից:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետի համաձայն՝

Խորհուրդը՝

1) իրավունք ունի պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների կամ անգործության վերաբերյալ ընդունելու հետևյալ որոշումները.

ա. արգելելու կատարել որոշակի գործողություններ և ընդունել որոշումներ,

բ. պարտավորեցնելու ընդունել համապատասխան որոշումներ, ներառյալ՝ չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը, բացառությամբ պայմանագիրը անվավեր ճանաչելու մասին որոշման,

գ. փոփոխելու ընդունված որոշումները.

2) որոշում է կայացնում մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին.

3) հաշվառում է խորհրդի կողմից ընդունված որոշումները և դրանց կատարման նկատմամբ իրականացնում է հսկողություն:

Հաշվի առնելով, որ բողոքը քննող անձի իրավունքները, այդ թվում նաև գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու իրավունքը հստակ և սպառիչ սահմանված է «Գնումների մասին» ՀՀ օրենքով, կարծում ենք որ «ԳՀԱՊՁԲ-2020/16-13-ԵՊԲՀ» ծածկագրով ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագրերում փոփոխություն կատարելու մասին որոշումը, ոչ մի դեպքում չի կարող մեկնաբանվել որպես գնման ընթացակարգի չկայացած հայտարարելու որոշում:

Հաշվի առնելով վերոնշյալ հիմնավորումները, բողոքը քննող անձի կողմից կայացված որոշումը պարզաբանման պահանջ է առաջացրել կայացված որոշման կատարման հարցում, ինչի նպատակով ս.թ. մայիսի 15-ին պատվիրատուն գրավոր դիմել է գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Լ.Օհանյանին մանրամասն նկարագրելով որոշման գործնականում կատարման անհնարինությունը և խնդրելով տալ պարզաբանում թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2020/51 որոշումից բխող՝ պատվիրատուի հետագա քայլերի վերաբերյալ: Գրության պատճենը ներկայացվել է ՀՀ ֆինանսների նախարար պարոն Ատոմ Ջանջուղազյանին:

Ս.թ. մայիսի 25-ին, ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի պատասխան գրությամբ, անձը ներկայացրել է առաջացած խնդիրների վերաբերյալ պարզաբանում

*չկրամադրելու, ինչպես նաև կայացրած որոշման իրավապարտադիր լինելու և պատվիրատուի կողմից այն անվերապահ կատարելու իրավական հիմքերը, միաժամանակ անլուծելի թողնելով կայացված որոշման կատարման նպատակով պատվիրատուի մոտ առաջացած խնդիրները:*

***Պատվիրատուի 15.05.2020թ. թիվ 09/511 գրությամբ բարձրացված բոլոր հարցերը, դրանց առաջացման պատճառները և ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի 25.05.2020թ. գրությամբ առաջացած հարցերի լուծման ճանապարհները ներկայացված են կից:***

*Կայացված որոշման վերացման նպատակով «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամը պատրաստվում է դիմել դատարան:*

*Հաշվի առնելով ստեղծված իրավիճակը, և «ԳՀԱՊՁԲ-2020/16-13-ԵՊԲՀ» ծածկագրով ընթացակարգի հրավերի 20-24-րդ չափաբաժիններով սահմանված դեղապատ ստենտերի անհրաժեշտության հրատապությունը, խնդրում ենք Ձեր մեթոդական ցուցումը «ԳՀԱՊՁԲ-2020/16-13-ԵՊԲՀ» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հետագա քայլերի կատարման նպատակով առաջացած հարցերի վերաբերյալ.*

1. *Եթե ԳԲՔԱ-ԼՕ-2020/51 որոշման պահանջը վերաբերում է «ԳՀԱՊՁԲ-2020/16-13-ԵՊԲՀ» ծածկագրով ընթացակարգին, առկա են արդյո՞ք այնպիսի մեխանիզմներ, գործիքներ, ընթացակարգեր կամ իրավանորմեր, որոնք հնարավորություն են տալիս գնումների մասին օրենսդրության պահանջներին համապատասխան ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագրերում կատարել որևէ փոփոխություն, այն դեպքում երբ ընթացակարգի հայտերի բացումը արդեն տեղի է ունեցել:*
2. *Կարող է արդյո՞ք պատվիրատուն, ԳԲՔԱ-ԼՕ-2020/51 որոշման պահանջի կատարման անհնարինության դեպքում /«ԳՀԱՊՁԲ-2020/16-13-ԵՊԲՀ» ընթացակարգի հրավերի փոփոխություն/ չեղյալ հայտարարել գնման ընթացակարգը և միաժամանակ դատական կարգով բողոքարկել ԳԲՔԱ-ԼՕ-2020/51 որոշումը:*
3. *Կարող է արդյո՞ք պատվիրատուն, ԳԲՔԱ-ԼՕ-2020/51 որոշման պահանջի կատարման անհնարինության դեպքում /«ԳՀԱՊՁԲ-2020/16-13-ԵՊԲՀ» ընթացակարգի հրավերի փոփոխություն/ շարունակել գնման ընթացակարգը և միաժամանակ դատական կարգով բողոքարկել ԳԲՔԱ-ԼՕ-2020/51 որոշումը:*

4. Կարող է արդյո՞ք պատվիրատուն կասեցնել գնման ընթացակարգը մինչև դատարանի կողմից որոշում կայացնելը և միաժամանակ հայտարարել պահանջվող դեղապատ ստենտերի նոր գնման ընթացակարգ:

Կից ներկայացված են՝

1. ՀՀ գնումների հետ կապված բողոքը քննող անձ՝ Լ.Օհանյանին հասցեագրված պատվիրատուի 15.05.2020թ. թիվ 09/511 գրության պատճենը,
2. ՀՀ գնումների հետ կապված բողոքը քննող անձի 25.05.2020թ. պատասխան գրության պատճենը:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ ԱՐՄԵՆ ՄՈՒՐԱԴՅԱՆ

«ԵՐԵՎԱՆԻ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

"YEREVAN STATE MEDICAL UNIVERSITY
AFTER MKHITAR HERATSI" FOUNDATION

ՀՀ, 0025, Երևան, Կորյունի փ. 2 • Koryun St. 2, Yerevan, 0025, Republic of Armenia • Tel: +374 10 582532 • Fax: +374 10 564111 • URL: www.ysmu.am • E-mail: genserv@ysmu.am

թիվ 09/511

«15» 05 2020թ.

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔԸ
ՔՆՆՈՂ ԱՆՁ ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆԻՆ

Պատճենը՝ ՀՀ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ,
ՊԱՐՈՆ ԱՏՈՄ ՋԱՆՋՈՒՂԱԶՅԱՆԻՆ

**Հարգելի պարոն Օհանյան.**

«Ալմաքսիմա» ՍՊ ընկերության դիմումի հիման վրա ԳԲՔԱ-ԼՕ-2020/51 ծածկագրով բողոքի շրջանակներում 2020 թվականի մայիսի 8-ին Ձեր որոշմամբ (այսուհետ՝ նաև Որոշում) բավարարվել է այն:

*Բողոք բերող անձը նշել է, որ ՀՀ Կառավարության 04.05.2017 թվականի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 21-րդ կետի 1-ին ենթակետի ա/ պարբերությամբ սահմանված դրույթը կիրառելի չէ դեղապատ ստենտների համար և պահանջել է **<u>վերացնել ընթացակարգի</u>** հրավերի 20-24-րդ չափաբաժիններով գնման առարկաների տեխնիկական բնութագրերում սահմանված «Պարտադիր պայման է հանդիսանում՝ մասնակիցը հայտով ներկայացնում է ապրանքը արտադրողից, կամ վերջինիս ներկայացուցչից տված ապրանքի վաճառքի թույլտվությունը հավաստող՝ ավտորիզացիոն նամակ, իսկ պայմանագրի կատարման փուլում ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից երաշխիքային նամակ» պահանջը:*

Որոշումը Համալսարան է մուտք եղել 13.05.2020 թվականին:

23.04.2020 թվականին թիվ 09/472 գրությամբ Համալսարանը գնումների բնագավառում պետական լիազոր մարմնին՝ ՀՀ ֆինանսների նախարարությունն էր ուղարկել ՀՀ Կառավարության 04.05.2017 թվականի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի պարզաբանման առումով 2 խնդրահարույց հարցերը, **<u>որոնցից սույն գործով բողոքին էր վերաբերում միայն 1-ին հարցը</u>**:

<u>Սույն գործով բողոքի շրջանակներում պարզաբանման ենթակա հարցը (1-ին հարց) հետևյալն էր.</u>

«Արդյո՞ք ՀՀ Կառավարության 04.05.2017 թվականի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 21-րդ կետի 1-ին ենթակետի ա) պարբերության մեջ նշված **«պայմանագրի կատարման փուլում ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից երաշխիքային նամակի կամ համապատասխանության սերտիֆիկատի ներկայացման անհրաժեշտությունը, եթե դրանք կիրառելի են տվյալ ապրանքի համար»** **արտահայտությունը կիրառելի չէ բժշկական նշանակության այնպիսի ապրանքների համար**, որոնք հիվանդների կյանքի համար ունեն խիստ կենսական նշանակություն, օրինակ, ինվազիվ սրտաբանական պարագաների համար: Ձեռք բերվող ապրանքները նկարագրելիս պահպանելով գնումների օրենսդրության բոլոր պահանջները, **արդյո՞ք հենց այս պարբերությունը չէ որ կարող է օգնել պատվիրատուին գոնե չնչին ձևով ապահովագրվել շուկայում առկա բազմազան էժանագին և անորակ ապրանքների ձեռքբերումից, հակառակ դեպքում ե՞րբ է կիրառելի այս կետը»:**

Համալսարանի գրությանն ի պատասխան ՀՀ Ֆինանսների նախարարությունն իր **Գրության (այսուհետ՝ Գրություն) 1-ին կետով տրվել հետևյալ պարզաբանում.**

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով փարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը՝ ընդգրկվում են պայմանագրում:

Միաժամանակ՝ ՀՀ Կառավարության 04.05.2017 թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 11-րդ և 13-րդ կետերով սահմանված է, որ պատասխանատու ստորաբաժանումն է կազմում և հաստատում գնման հայտը, որի նախագծմանը մասնակցող անձը (անձինք) պետք է ունենան գնման առարկան բնութագրելու մասնագիտական կարողություն, ինչը որոշվում է՝ ելնելով գնման առարկայի տեսակից:

**... գնման հայտի նախագծման մասնակցող անձը կարող է որոշել և սահմանել կարգի 21-րդ կետով նախատեսված պահանջի՝ գնվելիք ապրանքի նկատմամբ կիրառման հնարավորությունը»:**

Պետական լիազոր մարմնի կողմից տրված մեկնաբանությունը ավելի քան բավարար էր «Ալմաքսիմա» ՍՊ ընկերության բողոքը մերժելու համար, սակայն զարմանալիորեն կայացվել է բոլորովին այլ՝ անհիմն որոշում:

Ձեր 08.05.2020 թվականի թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2020/5 որոշմամբ նշել եք հետևյալը. (մեջբերում) «Պարտավորեցնել «ԳՀԱՊՁԲ-2020/16-13-ԵՊԲՀ» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին, ընթացակարգի **հրավերի 20-24-րդ չափաբաժինների տեխնիկական բնութագրերում կատարել փոփոխություն**՝ համապատասխանեցնելով Կարգի 21-րդ կետի 1-ին ենթակետի «ա» սահմանված դրույթներին, այն է՝ «Մասնակիցը պայմանագրի կատարման փուլում ներկայացնում է ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից տվյալ ապրանքի թույլտվությունը հավաստող՝ **ավտորիզացիոն նամակ, և** ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից **երաշխիքային նամակ»** (մեջբերման ավարտ):

Տեղեկացնում ենք, որ Ձեր թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2020/5 որոշումն ընդունվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքով, ՀՀ Կառավարության 04.05.2017 թվականի թիվ 526-Ն որոշմամբ, ՀՀ ֆինանսների նախարարի 06.12.2018 թվականի թիվ 600-Ն հրամանով նախատեսված ընթացակարգի

ընթացակարգային պահանջների կոպտագույն խախտմամբ, որի առնչությամբ Համալսարանը ՀՀ օրենսդրությամբ նախատեսված համապատասխան միջոցներ է ձեռնարկում:

Որպես լրացուցիչ տեղեկություն հայտնում ենք, որ նշված գործով 17.04.2020 թվականին Համալսարանի կողմից ներկայացված առաջին դիրքորոշմամբ հայտնել էինք, որ *06.04.2020 թվականին Համալսարանի (պատվիրատուի) կողմից հայտարարված «ԳՀԱՊՁԲ-2020/16-13-ԵՊԲՀ» ծածկագրով գնանշման հարցման միջոցով բժշկական նշանակության ապրանքների և բժշկական գործիքների գնման ընթացակարգի **հայտերի բացումը տեղի է ունեցել 14.04.2020 թ.-ին ժամը 09.30-ին**, **բողոքի վերաբերյալ ծանուցումը Համալսարանը ստացել է 15.04.2020թ.-ին ժամը՝ 16:05-ին**, իսկ **հայտերի բացման նիստի արձանագրությունը տեղեկագրում հրապարակվել է՝ 15.04.2020 թ.-ին»:***

ՔԱՆԻ ՈՐ ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆ ԻՐԱՎԱՊԱՐՏԱԴԻՐ Է, ԻՍԿ ՆՄԱՆ ՈՐՈՇՄԱՄԲ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ՈՐՈՇՈՒՄՆ ՀՆԱՐԱՎՈՐ ՉԻ ԿԱՏԱՐԵԼ ՎԵՐՈՀԻՇՅԱԼ ՀԻՄՆԱՎՈՐՄԱՄԲ, ՈՒՍՏԻ ՈՐՊԵՍ ՈՐՈՇՈՒՄՆ ԸՆԴՈՒՆԱԾ ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁ ԽՆԴՐՈՒՄ ԵՆՔ ՊԱՐԶԱԲԱՆԵԼ ՁԵՐ ԹԻՎ ԳԲՔԱ-ԼՕ-2020/51 ՈՐՈՇՈՒՄԻՑ ԲԽՈՂ՝ ՊԱՐԶԱԲԱՆՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՀԵՏԵՎՅԱԼԸ ՀԱՐՑԵՐԸ՝

1. *Արդյո՞ք Որոշման պահանջը վերաբերում է միայն թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2020/51 ծածկագրով բողոքին, թե այն կայացվել է ապագայում իրականացվելիք բոլոր **նմանատիպ ապրանքների ձեռքբերման** նպատակով գնման ընթացակարգերին (նմանատիպ այլ մրցույթներին).*

2. *Եթե Որոշումը վերաբերում է միայն թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2020/51 բողոքին, ապա առկա՞ են արդյոք այնպիսի մեխանիզմներ, միջոցներ, գործիքներ, ընթացակարգեր կամ իրավանորմեր, որոնք հնարավորություն են տալիս ամիսներ առաջ էլեկտրոնային կարգով ուղարկված կամ gnumner.am կայքի միջոցով ներբեռնված, գեներացված մրցույթի հրավերում՝ տեխնիկական բնութագրում կատարել որևէ փոփոխություն, այն դեպքում, երբ ընթացակարգի հայտերի բացումը արդեն տեղի է ունեցել՝ գնումների մասին օրենսդրության պահանջներին համապատասխան:*

3. *Առկա՞ է արդյոք այնպիսի իրավական նորմեր, որոնց հիման վրա հնարավոր կլինի թիվ ԳՀԱՊՁԲ-2020/16-13-ԵՊԲՀ ծածկագրով ընթացակարգի **հրավերի տեխնիկական բնութագրերում կատարել փոփոխություն և ընթացակարգը հայտարարել չկայացած, այն դեպքում երբ ընթացակարգի հայտերի բացումը տեղի է ունեցել:***

*Քանի որ Ձեր Որոշման պահանջների կատարումը Համալսարանի (Պատվիրատուի) համար տարակարծությունների, տարընկալումների տեղիք է տալիս, որի առկայության պայմաններում այն գործնականում հնարավոր չէ որևէ ձևով կատարել, հետևաբար կարիքն առաջանալու կապակցությամբ խնդրում ենք պարզաբանել թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2020/51 որոշման հետ կապված վերոնշյալ հարցերը՝ համապատասխան իրավական նորմերի մատնանշմամբ (իրավական ակտ, հոդված կետ):*

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ ԱՐՄԵՆ ՄՈՒՐԱԴՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ**

«25» մայիսի, 2020թ.

ք. Երևան,

**«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական**
**բժշկական համալսարան» հիմնադրամի ռեկտոր**
**Ա. Մուրադյանին**

*Հասցե՝ ք. Երևան, Կորյունի 2*

**Հարգելի պարոն Մուրադյան,**

Ի պատասխան Ձեր 15.05.2020թ.-ի թիվ 09/511 գրության հայտնում եմ հետևյալը.

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքով գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից կայացված որոշման պարզաբանման վերաբերյալ որևէ դրույթ սահմանված չէ, բողոքներ քննող անձն օժտված չէ իր կողմից կայացված որոշումը պարզաբանելու իրավասությամբ, ուստի այն ենթակա չէ պարզաբանման:

2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 6-րդ (Օրինականության սկզբունքը) հոդվածի 1-ին մասի համաձայն՝ **պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով:**

Միաժամանակ՝

